Գործ թիվ ԵԴ2/3274/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.05.2024թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս, ծանոթանալով «Պրեմիում Մաշինների էյ էմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ն.Բաբայանի ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի՝ 25.03.2024թ. թիվ 111 հրամանն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին, հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Պրեմիում Մաշինների էյ էմ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ն.Բաբայանը 26.04.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ընդդեմ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ.Բրուտյանի՝ 25.03.2024թ. թիվ 111 հրամանն անվավեր ճանաչելու և այն վերացնելու պահանջների մասին, հայցադիմումին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Մազմանյանին՝ 26.04.2024թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 30.04.2024թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 05.06.2024 թվականին:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ